ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2008 թվականի N 355-Ա

## «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ԱՎԵԼԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածը, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում Հայաստանի Հանրապետության բաժնեմասն ավելացնելու և ակտիվները համալրելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կանոնադրությամբ սահմանված կարգով ընկերության կառավարման մարմիններում հանդես գալ առաջարկությամբ ու տալ համաձայնություն լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու և Հայաստանի Հանրապետության օգտին տեղաբաշխելու միջոցով ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու վերաբերյալ՝ լրացուցիչ թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը նախատեսելով սույն որոշման 2-րդ կետով սահմանված ձևով:

2. «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում հաշվառված՝ սույն որոշման հավելվածում նշված ջերմամատակարարման օբյեկտները՝ շինությունները, դրանցով զբաղեցված ու դրանց օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը (այսուհետ՝ գույք) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ անկախ գնահատողի կողմից գնահատված արժեքով ներդնել ընկերության կանոնադրական կապիտալում, որի դիմաց վճարումը կկատարվի ընկերության կողմից համապատասխան քանակությամբ բաժնետոմսերի թողարկման և Հայաստանի Հանրապետության օգտին տեղաբաշխման եղանակով:

3. Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ 5-օրյա ժամկետում ապահովել սույն որոշման հավելվածի 2-5-րդ կետերում նշված գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության գույքային իրավունքների պետական

գրանցումը՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի միջոցների հաշվին:

4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի գնահատման՝ շուկայական արժեքի որոշման հետ կապված ծախսերն ընկերությունը կկատարի իր միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
Տ. Սարգսյան

2008 թ. ապրիլի 16
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2008 թվականի**
**մարտի 13-ի N 355-Ա որոշման**

**Ց Ա Ն Կ**

**«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ**

| NN ը/կ | Գույքի անվանումը և հասցեն | Օբյեկտի զբաղեցրած հողատարածքը (քառ. մետր) | Շինության զբաղեցրած մակերեսը (քառ. մետր) |
|---|---|---|---|
| | ԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱՅՆՔ | | |
| 1. | ԿՋՀ, Աղայան փողոց, 9 | 152,95 | 136,85 |
| | ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔ | | |
| 2. | Կաթսայատուն, Չեխովի փողոց, 56/3 | 265,0 | 265,0 |
| | ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՀԱՄԱՅՆՔ | | |
| 3. | Կաթսայատուն, Դավիթ Անհաղթի փողոց, 23/5 | 343,0 | 337,7 |
| | ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱՄԱՅՆՔ | | |
| 4. | Կաթսայատուն հ. 9, Աջափնյակ 9-րդ թաղ., Մարգարյան փողոց, 37/4 | 193,74 | 185,0 |
| | ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՀԱՄԱՅՆՔ | | |
| 5. | Կենտրոնական կաթսայատուն «Արարատյան», Կուրղինյան փողոց, 7/3 | 2657,2 | 992,5 |
| | Ընդամենը | 3611,89 | 1917,05 |

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**